## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

20 հունվարի, 2020 թվականի № 4-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ-ՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված ուղեցույցների 177-րդ, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ներքին աուդիտի կանոնակարգի 52-րդ կետերի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ներքին աուդիտի 2020 թվականի տարեկան ծրագիրը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրինությունում 2020 թվականի հունվարի 27-ից մարտի 27-ը և հոկտեմբերի 12-ից նոյեմբերի 27-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում 2020 թվականի մարտի 30-ից հունիսի 05-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
3. «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ում 2020 թվականի հունիսի 15-ից օգոստոսի 07-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
4. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրինությունում 2020 թվականի օգոստոսի 24-ից հոկտեմբերի 09-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
5. Աուդիտորական առաջադրանքներ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

-Աշխատանքային խմբի ղեկավար՝ ներքին աուդիտի բաժնի պետ Արմեն Մոսինյան

-Աշխատանքային խմբի անդամ՝ ներքին աուդիտի բաժնի առաջատար աուդիտոր

Արմինե Հակոբյան

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

20 հունվարի, 2020 թվական

ք. Երևան